

ԵՐԵՎԱՆԻ ԵՐԵՐԵՐԻ ՏՈՒՆԻՍԻ

ՄԵԼԻԿ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 բուրլի կէս տարվանը 6 բուրլ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տ է Լ է Ֆ օ ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և առաւօրեայ).

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լիզովով.

Յայտարարութիւնները համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տ է Լ է Ֆ օ ն № 253.

Թիֆլիսի Քաղաքային Վարչութեան Արտիվերուս Ն Ե Կ Ի Տ Ի Ս Ս Ե Վ Ի Չ Ք Ե Փ Ի Ն Օ Վ

Կամօքն Առաւօտեայ Վարչութեան Ներկայ յունիսի 27-ին օրի մասին ծանուցանում են ծանօթներին և ազգականներին հանգուցեալի ծառայակցները, Թիֆլիսի Քաղաքային վարչութեան ծառայողները, Յուդարկաւորութիւնը և լինի հանգուցեալի բնակաւորները, Մալաթի Պէտրիանիայի փողոցի վրա, սեփ. տուն, № 32, առաւօտեան 10 ժամին դէպի Վանքի եկեղեցին, և ապա խօշիվանքի գերեզմանատունը:

ԲՈՎԱՆԴԱՅԻՆՈՒԹԻՒՆ

Անցած շաբաթը, Վերջին տեղեկութիւններ.
— Ներքին Տնօնութիւն. Հրաման կովկասեան Փոխարքայի վարչութեան. Ամենայն հայոց վեհափառ Կաթողիկոսը Թիֆլիսում և տեսակցութիւնը Կովկասի Փոխարքայի հետ. Ներքին լուրեր. — Հեռագրեր. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ԱՆՑԱՆԾ ԵԱՐԱԹՐ

Թիֆլիսում տիրող ընդհանուր գործադուլի պատճառով «Մշակ» լրագիրը լոյս չը տեսաւ ամբողջ շաբաթվայ ընթացքում: Նոյն վիճակին են ենթարկվել և տեղական բոլոր թերթերը առանց բացառութեան:

Մենք անկարող էինք խօսել թէ մեր երկրում և թէ մեր երկրից դուրս տեղի ունեցած դէպքերի մասին, որոնք առանձին հետաքրքրութիւն էին ներկայացնում մեր ընթերցողներին համար:

Նախընտանի աղետի բեմը, որ բեռնել էր իր վրա մեր հասարակութեան յատուկ ուշադրութիւնը վերջին ամսվայ ընթացքում, փոքր ի շատէ միջկարմիր կան վիճակի մէջ է: Պրինց Մալաթիան շիտակ և արդար վերաբերմունքը դէպի գործը ունեցաւ անմիջապէս բարի հետեւները: Աւերող և ասպատակող ոյժերը դապիցին զգալի կերպով: Լիակատար խաղաղութիւնը դեռ չէ հաստատվել երկրի մէջ, բայց լաւ սկիզբ է դրված այդ խաղաղութեան համար:

Վեհափառ Կաթողիկոսը երեքշաբթի, յունիսի 21-ին ճանապարհ ընկաւ Էջմիածնից դէպի Ալեքսանդրոպոլ և Թիֆլիս: Շաբաթ օր Վեհափառը ներկայացաւ կովկասեան Փոխարքայ կոմս Վորոնցով-Դաշկովին: Փոխարքան և իր ամուսինը ցոյց տուին Վեհափառին սիրալիք ընդունելութիւն: Նոյն օրը Փոխարքան իր ամուսնու հետ միասին վերադարձին այցելութիւն Վեհափառին Թիֆլիսի առաջնորդարանում: Մշակի ներկայ համարում մենք գետեղում ենք այդ այցելութեան մանրամասն նկարագրութիւնը:

Բաբելոն աւարտվեց Կուզմիսկու սենատորական ընկերան: Այդ ընկերան, ինչպէս հաղորդում է պաշտօնական հեռագիրը, բացայայտեց շատ երևոյթներ ազգայնական, անտեսական և ոստիկանական յատկութեան, որոնք ազդել էին փետրվարեան դէպքերի ծագման վրա: Մենատոր Կուզմիսկին քրէական հալածանք է յարուցել ոստիկանութեան պաշտօնատար անձանց դէմ: Բեկեղիան ցոյց է տուել վարչութեան պակասութիւնները, բնակիչների անձնական և գոյքային ապահովութիւնը մնում է անպաշտպան:

Ռուսաստանի ներքին կեանքի մէջ շարունակվում էր նոյն յուզված դրութիւնը լի յայտնով և երկրպագութեամբ թագաւոր Կայսրի այն յուսատու խօսքերը, որ նա առաջ իր մօտ եկած պատգամաւորութեան, առիթ տուին մի շարք խորհրդակցութիւնների թէ քաղաքային խորհրդարաններում և թէ գեմնիօրի ժողովներում, որոնց նպատակն էր ծրագրել Ռուսաստանի համար այնպիսի կարգեր,

որոնք իրապէս զոհացնէին ժողովրդի ժամանակակից կարիքները:

Մեր լրագրի հեռագրական բաժնում ընթերցողները կը կարդան Օդեսայի և Լոձի սարսափելի և անօրինակ դէպքերի մասին: Մամուլի մէջ լոյս տեսան և ուրիշ մանրամասնութիւններ: Մոլոր դէպքեր տեղի ունեցան Իվանով-Վոզնեսենսկի շրջանում և Կուրսկի նահանգում:

Պատերազմական բեմում պատրաստվում են խոշոր եղելութիւններ: Հակառակորդի զօրքերը պատրաստված են ներգործական քայլեր անելու համար:

Թիֆլիսը մի շատ ծանր վիճակի մէջ էր: Գործադուլի առաջին օրերը քաղաքում խաղաղութիւն և նոյն իսկ մեղմութիւն էր տիրում: Փակված էին խանութները, գործարանները, դադարեցրած էին լրագիրները, լազարները չէին վառվում գիշերները: Սկսած ուրբաթ օրվանից քաղաքի զանազան տեղերում գզվեցին ուռմբեր, որոնցից մեծան և վերաւորվեցին ոստիկանական պաշտօնեաներ և մասնաւոր անձինք: Ստորե հաղորդում ենք պաշտօնական հաղորդագրութիւն այդ դէպքերի մասին:

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Թիֆլիսում երկուշաբթի օր յունիսի 27-ին հեռագրական լուր ստացվեց, որ Օրդուբաթի մօտ գտնվող Հանդամէջ գիւղում թուրքերը սպանել են չորս հայ և կողոպտել մի քանի տուն: Այդ դէպքի մասին յայտնված էր Օրդուբաթից նոյնպէս Նախընտանի և Երևան: Թիֆլիսում գտնվող հանդամէջից ներքին տեղեկացրին երեք դէպքերի մասին փոխարքայի օգնական Սուլթան-Գրիմ-Գրեշին: Թիֆլիսի առաջնորդ Գրեշին ելակոչու Սաթուհեան նոյնպէս զեկուցեց այդ մասին Սուլթան-Գրիմ-Գրեշին, որը յայտնեց, որ արդէն ձեռք են առնված միջոցներ խառնակութիւնների դէմ: Թիֆլիսում գտնվող խաղաղաբար մի յատուկ կենտրոնական բւրք, որ կազմված է հայերից, թուրքերից, ռուսներից և վրացիներից, իր կողմից ուղարկեց Օրդուբաթի աւագ Բաբելոն մի հեռագիր, խնդրելով միջոցներ ձեռք առնել արհեստագործութիւնների դէմ: Օրդուբաթից ստացած մեր հեռագիրը ցոյց է տալիս, որ տեղական վարչութիւնը լուրջ է վերաբերվել գործին և եռանդուն միջոցներ է դրմել: Առաջ ենք բերում կենտրոնական բւրքի երկու նախագահի ստորագրութեամբ ուղարկած հեռագիրը:

Թիֆլիս, 27 յունիսի
Օրդուբաթ Բաբելոն
Ստանալով Հանդամէջում տեղի ունեցած արհեստագործութեան մասին լուրը մենք կենտրոնական խաղաղաբար բւրքի անունից խնդրում ենք ձեռք առնել ամեն հնարաւոր միջոցներ խաղաղացնելու մտքերը և դադարեցնել արհեստագործութիւնը: Հաղորդեցէք ձեռք առած միջոցների մասին:

Շաքիձ բեգ Միքայել
Ախեմանդ Գալսեօր

Ստացանք հետեւալ հեռագիրները.

Աղուխ, 27-ն յունիսի, 9 ժամ 11 րոպէ.

Օրդուբաթում և շրջակայ գիւղերում թուրքերը յուզվում են. Հանդամէջ գիւղում յայտնեցին 4 մարդ, որոնց թուում տանուտէրի օգնականին գիւղերում կողոպտված են տները. Աղուխը յուզման մէջ է: Վախենում են յարձակումից կողոպտելու և կողոպտելու նպատակով, այստեղ կազմակերպել թուրք քիչ են, չեն կարող գիւղերը: Թուրքերը յարձակվեցին քաղաքի բնակիչների վրա, քեցիցն առաւրը: Նմալօն:

Օրդուբաթ, 27 յունիսի, 8 ժ. 35 ր. երեկ.

Երէկ, Օրդուբաթում սկսվեցին անկարգութիւններ. տեղական զօրքը կարգը վերականգնեց. հայերը տներից չեն դուրս գալիս: Հանդամէջ գիւղում սպանված են երեք չորս հայեր. կողոպտված է մէկ տուն. հայերը թագկացան եկեղեցու բաղնիքում. զօրքը պաշտպանում է գիւղը, տեղական պրիստաւ—Փիլիպովը գործում է եռանդուն կերպով: Նախընտանից ուղարկված է զօրք: Օրդուբաթից ներքին մասնակցել Հանդամէջի բռնութիւններին: Լազար Բաբելոն

Նախընտան, 18 յունիսի, լիցիւզիայ ժամը 6 և 50 ր.

«Յունիսի 18-ին արկնցը գնաց Զահրի, նայեց քանդված ու այրված տները, ձերբակալեց յայտնի գիւղապետին: Հաւաքելով մահմեդականներին, հրամայեց 5 օրում կառնել վերադարձնել կողոպտված փեռերը: Գեոմուր գիւղում, ուր հաւաքված էին 5 գիւղերի ազգաբնակչութիւնները, հրամայեց բազմաթիւ արեւոյն վերադառնալ իրանց գիւղերը, սկսել հունձը, տեղի չը տալ նոր անկարգութիւններին, խառնախառն պահակներ առնել մինչև լիակատար խաղաղացումը, վերադարձնել ստացուածքները կամ կողոպտիչներին կամ գանձարանի հաշուով:

Տեղի ու տեղի ջնհեղով Նախընտանի խաների գնալատը այն բանի դէմ, որ իր թէ գեոմուրցիները քեզ տարել են իրանց 4053 ոչխարը, պարզվեց որ խանի հովիւները քեզ տարել են 200 ոչխար: այն էլ լեռնից հայերից: Կազակների օգնութեամբ խանի հովիւները գեոմուրցիներին քեզ տարան ոչխարները յետ դարձնելու ժամանակ ես ուղեկցում էի պրինցին, հանգստացնելով ժողովրդին, յորդորում էի վերադառնալ իրանց գիւղերը: Բարձրթող արված, դատարկ գիւղերի և հասած անտէր արտերի տեսարանները ծանր տպաւորութիւն են թողնում: Վստահութիւն կայ, որ խաղաղութիւնը լիապէս կը վերականգնի: Բերքը լաւ է:

Մեսրոպ վարդապետ

Նախընտան, 18 յունիսի, ցերեկվայ ժամը 10 և 50 ր.

«Երէկ գիշեր յարձակումներ տեղի ունեցան Գիւլիստի և Կուլբէկի գիւղից հայ գիւղերի վրա: Մի քանի ժամ յետոյ ներանց այցելեց պրինց Նապօլէօնը: Զինուորները յետ մղեցին յարձակումը, շրջապատեցին Զահրիի գիւղը գիւղացիները: Սպասվում է, որ պատերազմական դրութիւն կը հրատարակվի: Պրինցը նորից գնաց գաւառը»:

Սեմակովիչ

Բազու, 19 յունիսի, ցերեկվայ 9 ժամ 26 ր.
«Այսօր պ. Դոյուխանեան Ամենայն Հայոց Կաթողիկոսին ուղարկեց հետեւեղ հեռագիրը. «Մշակ»-ից տեղեկանալով, որ պարսկական միսիսարը դիմել է Ձեր

Սրբութեանը խնդրելով ազդել Բազուի հայերի վրա, որոնք իբր թէ զինւում են և պատրաստվում յարձակվելու թուրքերի վրա,—պատիւ ունիմ հաղորդելու այդ առիթով, որ այդ բոլորը սուտ է: Ընդհակառակը, Բազուի հայերը ամեն ջանք գործ են դնում, որ խաղաղութիւնը չը խանգարվի, թէ և վերջին օրերը ամենայն օր տեղի են ունենում սպանութիւններ հայերի դէմ.—ի միջի այլոց սպանվեց ինժէնէր Լևոն Տէր-Սարգսեանը: Բազուից այդպիսի անստորագրի հեռագիրներ ուղարկված են Պարսկաստան, ակներև ներպատակ ունենալով այնտեղ գրգռում և խառնակութիւն առաջ բերելու»:

Տեղ. Միքայել

Նախընտան, 20 յունիսի, երեկոյան 5 ժ. 14 ր.

«Այսօր կազակները բռնեցին յայտնի աւազակ Հաջի Նալաֆ-դուլին, որը մասնակցել է մի քանի յարձակումների և որը 4 օր գերի է պահել Բազուի միջոցառման, բռնի իսլամ դարձրած. նրա մօտ գտել են քանանայի բերդանի հրացանը և ատրճանակը, հայերից կողոպտած 20 ձի: Աւազակը ձերբակալված է»:

Սեմակովիչ

Նախընտան, 26 յունիսի

Տեղական իշխանութիւնը հաւատացնում է, թէ այստեղի կողոպտածի մի պատճառն էլ այն է, որ հայերի մօտ գտել են ուռմբեր, որի պատճառով իսկ երկու հայեր բանտարկվեցին, չը նայելով այն բանին, որ ուռմբերը ոչ այլ ինչ էին, եթէ ոչ էլ Էսթրական չոր տարբեր: Այժմ երկու բանտարկվածներն էլ բաց են թողնված, որ ցոյց է տալիս ուռմբերի մասին եղած առասպելի անհեթեթութիւնը: Յունիսի 22-ին վերջացաւ հինգ օրեայ ժամանակամիջոցը—որ նշանակված էր պրինցի կողմից կողոպտված ստացուածքը վերադարձնելու համար հայերին. տեղ-տեղ վերադարձնում են հոտերը յաճախ իրանց—կողոպտողներին պատանդ: Բանտից ազատված է կողոպտածի առաջնորդներից մէկը՝ Հուսէյն Նովրուզովը:

Սեմակովիչ

Նախընտան, 26 յունիսի, երեկ. ժամը 6 և 5 րոպէին:

Սկսվեց կողոպտված գոյքերի ամենափոքր մասի բաշխումը: Բոլոր գիւղերի բնակիչները վերադառնում են և ձեռնարկում են աշխատանքի: Մեծ է կարեւոր ամենահասարակ տնային իրերի և երկրագործական գործիքների մէջ:

Մեսրոպ վարդապետ

Յունիսի 22-ին Երևանի մեր թղթակից Ա—Դօ գրում է մեկ հետեւալ.

Երևանի գեներալ Նահանգապետ պրինց Նապօլէօն ամսիս 20-ին, երեկոյան ժամը 6-ին վերադարձաւ Նախընտանի կողմերը կատարած ճանապարհորդութիւնից և երէկ առաւօտ պատերից կայրվեց բաղնիքում զինուորական գրութիւն հրատարակող յայտարարութիւններ:

Քաղաքը շատ դժուարութեամբ մօտենում է իր նախկին դրութեան, բազալ խանան և շուկան շարունակում են ամառի մնալ, իւրաքանչիւր դէպք գալիս է երկու ազգութիւնների դէպի միմեանց տածած անվստահութիւնը նորոգելու: Այսօր, ցերեկվայ ժամը երկուս և կեսին քաղաքի կենտրոնում, պօստային դրասենակի դիմաց, մի թուրք ատրճանակ արձակեց մի հայի վրա, բայց առանց նպատակին հասնելու. թուրքը սկսեց փախչել, բայց նրան հետևող հայերը և

ուստիկանը կարողացան հետքը գտնել մի թուրքի տան մէջ և երկու ժամից յետոյ տան տէրը ստիպւած եղաւ կրակ բացողին տալ կառավարութեան ձեռքը: Այս դէպքը նորից մի թեթեւ չփոթ առաջացրեց, բայց չուտով էլ խաղաղվեց:

Քաղաքում երկու կողմերից 16-ական հոգուց կազմված կոմիտեան արդէն գործի մէջ է մտել: Նա ամսիս 20-ին, քաղաքային խորհրդի դահլիճում խորհրդակցութիւն ունեցաւ, ուր ի միջի այլոց որոշվեց հետեւել լրագրութեան և եթէ նրա մէջ լոյս տեսնեն փաստերը աղաւաղող ու գեղեցիկ առաջացնող սուտ և չափազանցութիւններ պարունակող հաղորդագրութիւններ կոմիտեայի կողմից անմիջապէս տրվեն հերքումներ: Այս առաջարկը ընդունվեց համարեա միաձայն: Ի նկատի ունենալով այս որոշումը, քաղաքագրութեան հարց բարձրացրեց հերքել թուրքերէն նոր հրատարակվող «Հայեթ» լրագրի յօդուածը, ուր Երևանի դէպքերը առաջ են բերված այնպիսի գունատ-ւորումներով և բացարձակ ստախոսութիւններով, որ կարծիք միայն կարելի է: Կոմիտեայի թուրք անդամները պիտու էին որ այդպիսի բան չը կայ, սակայն երբ ուղարկեցին և այդ լրագրի համարը բերեցին ու մի առ մի կարդալ տալով թարգմանեցին բոլորի առաջ, կոմիտեան խոստովանվեց, որ յիշուի բացի մի երկու կէտերը յօդուածի մեծ մասը շինծու և բացարձակ աղաւաղումներ ի մի կոյտ էր կազմում: Մանաւանդ մի մեղադրութիւն քաղաքագրի նկատմամբ, որը, իբր թէ, իր Ձաք կոչված կալուածքում հարկ (100) զինված մարդիկ պահելով յարձակումներ է գործել տուել այս և այն տեղի թուրքերի վրա: Ձը նայած որ այս լուրերի բացարձակ ստախոսութիւնը խոստովանվում էր կոմիտեան, բայց և այնպէս որոշեց անցած բաների մասին հերքումներ չը գրեն, թէ և այդ մասին խօսք եղաւ նաև այսօրվայ ժողովում:

Այսօրվայ ժողովում կոմիտեան որոշեց խաղաղութիւնը վերականգնելու համար հրատարակել մի բրօշուր խաղաղասիրական բովանդակութեամբ ժողովրդի մէջ տարածելու համար և կազմել շրջող խմբեր, որոնք դուրս գալով գաւառները անձամբ խօսեն, քարոզեն և հաշտութեան հրաւիրեն ժողովրդին:

Այս րօպէին լուր հասաւ Ուլուխանու և թաղագիւղ գիւղերի մէջ տեղի ունեցած ընդհարման մասին: Ուլուխանուն 510 տուն ունեցող թուրքաբնակ մի մեծ և անհանգիստ գիւղ է, Երևանից 15 վերստ հեռավորութեամբ երկաթուղու առաջին կայարանը կազմելով: Ահա այս գիւղն էր, որը յանգանութիւն ունեցաւ երկու անգամ խուժելու երկաթուղու գնացքի մէջ խուզարկութիւններ և թաւաններ կատարելով ճամրորդների վերաբերմամբ: Ահա այդ անհանգիստ գիւղին սահմանակից է 200 տուն ունեցող հայաբնակ թաղագիւղը: Ընդհարումը տեղի է ունեցել այսօր հոգերի սահմաններում, փոքրածիւ հայերի և թուրքերի մէջ: Վէճի բռնկումով թուրքերից մէկը ատրճանակով վիրաւորում է մէկ հայի, որին պատասխանում են հայերը և իբր երկու թուրքեր սպանվում են: Մանրամասնութիւններ առ այժմ չը կան:

Ա.—Դ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀՐԱՄԱՆ ԿՈՎԷՍՏԵԱՆ ՓՈԽԱՐԲԱՅԻ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

17 յունիսի 1905 թ-ի, Թիֆլիս, № 91

Յունիսի 27-ի Բարձրագոյն ուկաղով Թաղաւոր Կայսրը բարեհաճեց անհրաժեշտ հասարկ:

1) Պատերազմական վիճակում հրատարակել Թիֆլիս քաղաքը և Թիֆլիսի գաւառը, տարածելով նրանց վրա պատերազմական դրութեան մէջ հրատարակված վայրերի կանոնները և օրէնքները ոյժը:

2) Տալ ինձ այդ վայրերի վերաբերմամբ այն իրաւունքները, ինչ որ ունեն պատերազմական դրութեան մէջ յայտարարված տեղերի զինւորական գլխաւորները և պետական կարգն ու հասարակական հանգստութիւնը պահպանելու վերաբերութիւնով վարչական օրէնքների ունեցած իրաւունքները, և

3) Թոյլատրել ինձ յանձնելու այդ կանոնները 19-դ յօդուածի առաժ լրագրութիւնները այդ բանի համար յատկապէս նշանակված մի անձի, այն պայմանով, որ աս կարողանամ փոփոխել նրա կարգադրութիւնները պետական կարգի և հասարակական խաղաղութեան վերաբերմամբ:

Այդ Բարձրագոյն հրամանի մասին յայտարարելով ի տեղեկութիւն և ի գործադրութիւն, առաջարկում եմ Կովկասեան I զօրաբանակի հրամանատար գեներալ-լեյտենանտ Երանգելիին անյապող ստանձնել Թիֆլիս քաղաքը և Թիֆլիսի գաւառը գեներալ-նահանգապետի պաշտօնը:

Ստորագրված է. Նորին Կայսերական Մեծութեան Կովկասի փոխարքայ գեներալ-ադելաւանտ կոմս Վօրոնցով-Դաշկով:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՃԱՓԱՌ ԿԱՌՈՂԻՊՈՐԹԻՖԻԿԱՆ ՍՈՒՄ ԵՒ ՏԵՍՈՒԹԻՒՆԻՆԸ ԿՈՎԷՍՏԵԱՆ ՓՈԽԱՐԲԱՅԻ ՀԵՏ

Յունիսի 23-ին ամենայն հայոց Վեհափառ Կաթողիկոսը երեկոյեան ժամը չորսի գնացելով հասաւ Եջմիածնից Թիֆլիս: Հայրապետին ուղեկցում էր մի շքանշանը, բաղկացած Դէորդ արքեպիսկոպոս Սուրենեանից, Նահապետ Եպիսկոպոսից Յունիսի, և Կորիւն վարդապետներից:

Սանահնի կայարանում Նորին Վեհափառութեան ընդ առաջ էին գնացել Թիֆլիսի թեմական առաջնորդ Գրիգորի Եպիսկոպոս Սաթուրեանը մի քանիսով և մի քանի երէց-փոխերի հետ ու հայ ինտելիգենցիայի կողմից պատուիրակներ պ.պ. Սամսոն Յարութիւնեան և Հ. Առաքելեան, իսկ Թիֆլիսի կայարանում Հայրապետին դիմաւորելու և օրհնութիւնը ստանալու եկել էին հոգեւորականները, հայ հասարակութեան, Ներսիսեան դպրոցի հոգաբարձութեան, բարեգործական ընկերութեան և մամուլի ներկայացուցիչներ:

Յունիսի 24-ին Նորին Սրբութեան այցելեցին Թիֆլիսի նահանգապետը և քաղաքագրութեան մի քանի ձայնաւորները: Նահանգապետին և քաղաքագրին Հայրապետի կողմից փոխարձակ այցելութեան գնացին Սահակ և Յուսէփ վարդապետները:

Վեհափառ Հայրապետը, չը նայելով իր հիւանդագին վիճակին, յանձն է առել այս ճանապարհորդութիւնը յատկապէս Կովկասի փոխարքայ կոմս Վօրոնցով-Դաշկովի հետ տեսակցելու, նորին պայծառափայլութեան բարձր պաշտօնը շնորհաւորելու և խօսելու առանձնապէս կալուածական և դպրոցական խնդիրների մասին: Ունկնդրութիւնը Փոխարքայի մօտ նշանակվեց յունիսի 26-ին, ճաշից յետոյ, ժամը 2 1/2-ին:

Նշանակված օրը, առանդական սովորութեան համաձայն, ժամը 1-ին Փոխարքայի պալատից ուղարկվեց առաջնորդարան 30 ձիաւոր կզակներից բաղկացած պատուաւոր պահախախտը, պետական դրօշակով, ուղեկցելու համար հայրապետական գնացքը:

Հանդիսաւոր գնացքը առաջնորդարանից պալատ այս կարգաւորութեամբ էր: Ամենից առաջ գնում էին երեք ձիաւոր կզակներ, որոնցից միշինը կրում էր պետական դրօշակը, անգամ Թիֆլիսի երկու գործակալ բանաւորները կրում էին հայրապետական խաչն ու գաւազանը, սրանց էլ հետեւում էր Հայրապետի ձեռնաքաղաքը, որ տանում էր Կորիւն վարդապետը: Ապա գալիս էր Վեհափառ Կաթողիկոսը քառաձի փակ կառքով, որի ետեւում կանգնած էին կարմրագլուխ շաթրիները սպիտակ զինարկներով, իսկ կառքը շրջապատված էր ձիաւոր կզակներով: Հայրապետի կառքին հետեւում էին շքանշան անդամները կառքերը: Գնացքը ճիշդ որոշված ժամին կանգ առաւ պալատի առաջ: Փոխարքայ կոմս Վօրոնցով-Դաշկովը իր օգնականներ, գաղտնի խորհրդական Սուլթան Կրիմ-Գիլէյի և գեներալ Շիրինկինի և ուրիշ պալատական պաշտօնականների հետ դիմաւորեց Վեհափառ Կաթողիկոսին աստիճանների զլխին և առաջնորդեց նրան դէպի ընդունարանը՝ ուր մտան նաև օգնական Սուլթան Կրիմ-Գիլէյը, աւագ ցեղաւոր Ս. Գրիշինիան, Յունիսի վարդապետը իբրեւ թարգմաններ: Շքանշան միւս անդամները առաջնորդվեցին դէպի դահլիճ:

Վեհ. Հայրապետը ողջունելով կոմս Վօրոնցով Դաշկովին, մաղթելով նրան ոյժ և կարողութիւն երկրորդ կառավարելու համար և օրհնելով յայտանց, որ կոմսի հէնց եկած օրից մեծ ցանկութիւն ունէր անձամբ շնորհաւորել նրա բարձր պաշտօնը, բայց իր հիւանդագին վիճակը արգելում էր իրան և այժմ,

երբ նա մի քիչ ապաքինված զգաց իրան, շտապեց կատարել իր ցանկութիւնը և պարտաւորութիւնը ողջունել նրան, որի իմաստուն և մարդասեր կառավարութեան է յանձնել թագաւոր Կայսրը Կովկասը: Ապա Վեհափառ յիշեցրեց, որ կոմսը խոստացել էր այցելել Եջմիածինը և յոյս ունի, որ Նորին Պայծառափայլութիւնը կը կատարէ իր խոստումը:

Փոխարքան իր շնորհակալութիւնը յայտնելով Հայրապետին բարեմաղթութիւններով և շնորհաւորութիւններով համար, ասաց, որ իր ցանկութիւնն է անպատճառ այցելել Եջմիածինը և Նորին Սրբութեան և իր խոստումը կը կատարէ անպատճառ ներկայ տարվայ ընթացքում, մանաւանդ որ փափագ ունի այցելել և Եջմիածնի մատենադարանը, որ այնքան ճոխ է հազուագիւտ ձեռագրերով: Փոխարքան կցեց, որ ցաւում է հայերէն չիմաստուն համար, որպէս զի հնարաւորութիւն ունենար կարգաւ այդ ձեռագրերը և մանաւանդ Նորին Սրբութեան բանաստեղծական գրուածները:

Ունկնդրութիւնը տեւեց 20 րօպէ. հետեւել խօսակցութեան ժամանակ Վեհափառը կցեց, թէ քանի որ Թագաւոր Կայսրը յանձնել է Նորին Պայծառափայլութեան իմաստուն և մարդասեր բարեհայեցողութեան այն խնդիրները լուծումը, որոնց մասին ինքն աղբրապէս է ներկայացրել Նորին Կայսերական Մեծութեան 1903 թ. դեկտեմբերի 12-ին, ուստի խնդրում է շտապեցնել լուծումը: Փոխարքան պատասխանեց, որ յարուցված խնդիրները շուտով կը լուծվեն և, ինչպէս յոյս ունի, կը լուծվեն Նորին Վեհափառութեան համար նշանակաւոր ստորով:

Պայծառափայլութիւնը վերջանալուց յետոյ կոմսը խնդրեց Վեհափառին տալ օրհնութիւն իր ամուսնուն, կոմսուհուն: Վեհափառը եպիսկոպոսների և վարդապետների հետ առաջնորդվեց կոմսուհուն ընդունարան: Կոմսուհին ընդառաջ գալով համարեց Կաթողիկոսի աջը և ստացաւ նրա օրհնութիւնը: Այդտեղ թարգմանի պաշտօն կատարում էր Յունի վարդապետը: Կոմսուհին հիւրասիրեց Հայրապետին և շքանշանը սրճով և բաղնիքով: Կոմսուհին իր ընտանեկան և շատ սիրալիր բնակարանում, հրաւրեց կոմսուհուն և կոմսին ս. Եջմիածին, որոնք ընդունեցին հրաւերը:

Օրհնելով կոմսին և կոմսուհուն, Վեհափառ Հայրապետը նոյն ջրով վերադարձաւ առաջնորդարան:

Կէս ժամից յետոյ Կովկասի Փոխարքայ կոմս Վօրոնցով-Դաշկովը և իր ամուսին կոմսուհին փոխադարձ այցելութեան եկան Ամենայն Հայոց Կաթողիկոսին, որ ընդունեց նրանց առաջնորդարանի մեծ դահլիճում և առաջնորդեց ծաղկեայ դահլիճը: Խոսակցութիւնը շատ սիրալիր էր և տեւեց 15 րօպէ: Վեհափառը այստեղ կրկին յիշեցրեց դպրոցական և կալուածական խնդիրները մասին և խոստումն ստացաւ նորին պայծառափայլութիւնից նրանց շուտափոյթ լուծման մասին: Կոմսն, իմաստունով Վեհափառից, որ վաղեմի մայր եկեղեցու բակում թաղված են հայազգի նշանաւոր գործադատներ, յոյս յայտնեց, որ հայ ժողովրդի միջից այստեղից կը դուրս կը գան նրանք նման քաջարի զինւորական գործիչներ: Հրաժեշտ տալով Վեհափառին, կոմսուհին և կոմսը իջան Վաղեմի մայր եկեղեցին՝ համարելու համար ս. Յակոբի մասունքը և աղօթելուց յետոյ վերադարձան պալատ:

Յունիսի 27-ին, այցելեց Նորին սրբութեան Փոխարքայի քաղաքացիական մասի օգնական գ. խ. Սուլթան Կրիմ-Գիլէյը: Տեսակցութիւնը տեւեց 40 րօպէ և մանրամասն խօսակցութիւն ունեցաւ կալուածական և դպրոցական խնդրի առթիւ: Նորին գերազանցութիւնը հաւաստեցրեց, որ սեպտեմբերին անշուշտ հայոց դպրոցները կը վերաբացվեն, դրական մտքով կը լուծվի նաև կալուածական հարցը: Բայց նաև քան դպրոցների վերաբացումը որոշ կէտերի նկատմամբ փոխադարձ համաձայնութիւն պիտի լինի:

Նոյն օրը Նորին գերազանցութեանը Վեհափառ Հայրապետի կողմից այցելեցին Գրեգորի և Նահապետ Եպիսկոպոսները: Նոյն սրբազանները այցելեցին նաև Շիրինկինին Վեհափառի կողմից:

Նոյն օրը այցելեց Նորին սրբութեան պարսից կովկասեան ընդհանուր հիւպատոսը, Հիւ-

պատոսը հաւաստեցրեց Վեհափառ Հայրապետին, որ պարսկահայերը՝ միանգամայն ապահով վիճակի մէջ են և նրանց չէ կարող ոչ մի վտանգ սպառնալ շտրեկ պարսից կառավարութեան ձեռք առած միջոցներով: Նորին Մեծութեան արեգակնափայլ Շահի կամքն է, որ երկրորդ խաղաղ վիճակ ունենայ և այդ խաղաղութիւնը չէ կարող վրդովվել:

Յունիսի 28-ին պարսից հիւպատոսին Վեհափառ Հայրապետի կողմից փոխադարձ այցելութիւն տուին Եփրեմ և Կորիւն վարդապետները:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Մշակի» ներկայ համարը բաղկացած է 1 1/2 թերթից:

Յունիսի 23, 24 և 25-ին Թիֆլիսի գնահատան մասերում նետեցին 5 ուսում: Նրանցից մի քանիսը պայթեցին, որից ֆուսկեցին մի քանի անձեր: Յունիսի 23-ի երեկոյեան ժամը 9-ին մի անյայտ մարդ Արտիկէրիական հրապարակի վրա մի պետարդա նետեց (հասարակ պայթուցիկ), որի պայթիւնից թեթեւ վէրքեր ստացան երկու երեսներ: Երբ աղմուկը վրա դուրս վաղցրեց այդտեղ բնակվող պոլտավեան գնդի կազակները, նրանց մէջ նետեցին մի ձեռքի ուսում, որն ընկաւ ցեխի մէջ և չը պայթեց: Հետեւեալ օրը ժամը 6 1/2-ին երեկոյեան ուսումը նետվեց Սալթանսկի բաղնիքի Գրաֆիկի փողոցի անկիւնում գտնվող հրկորդ յարկի դատարկ տան լուսամուտից, ուր առաջ գինեւորն էր: Ռումը պայթեց այդտեղ կանգնած կազակների պահակի մօտ և, պատահականութեամբ կանգնած կազակներից մէկին, մի կողմ շարժեց միւս կազակին—Նիկոլայ Բիւլիսին, որը ծանր վէրքեր ստացաւ գլուխին, մէջքին և ոտներին: Այդ կազակը յունիսի լոյս 25-ի գիշերը մեռաւ Միքայէլեան հիւանդանոցում: Իացի դրանից փոքր վրա վտանգաւոր վէրք ստացաւ այդ տեղով անցնող մի մշակ Բաբա Միքայէլը և թեթեւ վէրքեր ստացան Վասիլի Սալթանսկի և Պրօֆ. Ֆիլ Միկէլով գնահատանը: Վասիլիսից բուժվում են Միքայէլեան հիւանդանոցում, իսկ Միքէլովը հետեւեալ օրը դուրս եկաւ: Բացի դրանից սպանվեց և մի կազակի ձի: Կազակները կրակ բաց արին ուսումը նետող անյայտ անձերի վրա, որոնք դատարկ տան կտուրը բարձրացան և ուղղւած էին թռչել միւս շէնքերի կտուրները և փախչել: Ոստիկանութիւնը բռնեց նրանց, Նոյն օրը երեկոյեան 8 1/2-ին հրկորդ ուսումը նետվեց Թուրքի մէջ գանի և Վօրոնցովի փողոցի անկիւնում, ուր կանգնած էին VI քաղաքապետի պրիւստի Գլեբովը, նրա օգնական Մօրգանսկին, օգորտօնի վերակացու Չիկովսկին և մի գործող: Գլեբովը թեթեւ վէրք ստացաւ ուսումը կտուրներից կրճի փափուկ մասերում (նա առողջանում է): Կրիստաւֆ օգնական Մօրգանսկին մի կողմ շարժվեց և մի թեթեւ վէրք ստացաւ թեթեւ վայր ընկնելու: Չիկովսկին ծանր վէրք ստացաւ ոտին (սխալ է այն լուրը, որ նա մեռել է): Բացի դրանից՝ ֆուսկեցին և կողմնակի անձեր: Նաւթիկեան վաճառականը, որ ուրիշներին հետ միասին հանրապետով վերադառնում էր Կրճանիսից, կողքին վէրք ստացաւ—Ղնջիվիլ և կողմը: Նոյն երեկոյեան դժբաղդեց հանցեցին 25 կտոր ոսկորներ, ֆուսկեց կտորատուներ են եղել ոսկորների մէջ: Նրա կեանքը վտանգի մէջ է: Հանրակառքի մնացած ճամրորդներն անվտանգ մնացին: Թեթեւ վիրաւորվել է այդ ժամանակ անցնող Միքայէլ Ռոբուսեան կռիւկաւորը, իսկ մի ուրիշ անցորդ՝ Սիբեյ Կրիստիան ծանր վէրք ստացաւ աղբրի վրա: Պայթիւնի տեղից ոչ շատ հեռու գտնվեց քաղաքապետի թաղված, մէջքին, թորերին և լեւորդին ծանր վէրք ստացած մի երեխայ—Պետրոս Շախբաւեան, որը մեռաւ հիւանդանոցում նոյն գիշերը և եթէ Նոյն երեկոյեան երրորդ ուսումը նետվեց Հաւաքարում, բայց նա չը պայթեց: Շախբաւ, յունիսի 25-ին, երեկոյեան ժամը 6 1/2-ին, Հաւաքարում մի անյայտ անձ երկու անգամ ատրճանակ արձակեց Կաթութեան հրապարակում կանգնած VII քաղաքապետի օգորտօնի վերակացու Իլինի վրա, մէջքից 2 ծանր վէրք հասցնելով նրան: Կազակը հասաւ այդ մարդու ետեւից և սրով կտուրեց նրա գլուխը: Այդ նկատելով, Հաւաքարի բնակիչներն սկսեցին տները կտուրներից կրակ անել կազակների վրա: Կազակները նրանց պատասխանեցին հրացանի կրակներով: 23 անգամ կրակ արին: Այդ հրաձգութեան ժա-

$1^{1/2}$

Յունիսի 20 էց Թէֆլիսում սկսվցն գովածա-
ղու, Էլէաբաբարըը դադարեցն, խանութները
փակեցին, լրագիրները դադարեցին, փողոց-
կում գո-
թեամբ,
պօնացի-
նկատվա-
պահնու-

19 ից, թէ ղէպի հարաւ, Զախանի
համբ, մեր զօրաժառանգը հանդիպել են
ային և արտիլէրիական կըռակի, որի
կէ հապտոնական լատալիօնը յարձա-
ծեց արտիլէրիական զօրքը օգնու-
Առաւօտեան 11 ժամի մօտեց հա-
նէն ստացան նոր աջակցութիւն:
Եւ, որ հապտոնայինները արձակուում են
ընտանաւորական խմբակներու մէջ:

ՔՐԻՍՏՈՒԳ: Ղաշտունական: «Правитель-
ный Вѣстник»-ում տպված է. «Վեր-
սանականներն նկատված շարժումը բան-
ն և մէջ Օգոստոսյում և դաւադր գանա-
ստրում, յունիսի 12-ին արտայայտվեց
ան գործարաններից եկած ներկայա-
ւորի մի ժողովով, որը պէտք է մշակէր
ուր գործադուլի պայմանները: Ուստի-
եան ունեցած տեղեկութիւններէ հա-
սոյդ անձերի թւում կային և սո-
ւիշիակիրականները կրօնակցութեան
կի ձօնաբեւութի անդամները, որի պատ-
ժողովին մասնակցող բոլոր անձերը
վեցին. ձեռքադրվածներէ մէկը
գլխից զոգականական լուսնաւոր

խաշն զաւատում էլ, ինչպէս և Օդեսսաս-
խանահայկութիւնները շարունակվում են
եկած ազդեցութիւններով։ Օդեսսայի
հերթի մէջ խառնակութիւնն աճեց և
ի 15-ին դարձաւ բացարձակ ապստամ-
բ, որ ուղեկցված էր սպանութիւննե-
րով և հրդեհներով։ Դրան ժամ-
հետեւալ անօրինակ և խայտառակ
որ ուսական նաւատորմի պատմու-
մէջ իր նմանը չէ ունեցել, թէև այդ
Օդեսսայի նախկին խառնակութիւնների
միջկական կապ չէ ունեցել։ Այդ օրը
դեմք ժամը 4 ին Օդեսսայի նաւակա-
լաւ Տենդրովսկի ծոցից Մև ծովը էս-
կի զբահակիր «Իշխան Պատեմսկին Տաւ-
ն», որի վրայից վայր իջնորդին մի
մեծած մի նաւատորմի գեղավ զբաւե-
նարին ուղեկցող նաւատորմերը զբին
սկի ծովաթումբի վրա, դէպքի կըըն-
րած մի թղթով, որով յայտարար-
ւ, որ Օմելուկ նաւատորին անմեղ
անել է մի օֆիցէր նրա համար, որ
թիւն է յայտնել կերակրի համար, որ
ի բոլոր օֆիցէրներին սպանել է կո-
ւ որ զբահակրից թնդաւթ աս-

խորհրդի հանցողութեան. 2) մշակել և յանձնել ներկայացնելու համար. ա) լիֆլանդիայի նահանգական պարագլխի միջնորդութիւնը՝ թոյլ տալու այդ աղետակալութեան հաստատելու և պահելու իր սեփական միջոցներով գինեգործական, գերմանական լեզուի դաստաւանութեամբ. բ) այն կարգը, որով պէտք է թոյլատրվեն բանալու անդրբալտիկան նահանգներում մասնաւոր կրթական հաստատութիւններ՝ տեղական լեզուներէ դաստաւանութեամբ. II Որոշել, որ անդրբալտիկան նահանգներէ կրթական հաստատութիւններէ բոլոր դասարաններում կ'օգնի և տեղական լեզուներէ դաստաւանութիւնը լինելու է աշակերտներէ մայրենի լեզուով. III թոյլատրել ժողովրդական լուսաւորութեան միջնորդին հոգ տանել նշանակելու՝ ժողովրդական ստորին կարգի ուսումնարաններէ ուսուցիչներէ պաշտօնի համար աշակերտներէ մայրենի լեզուն իմացող մարդկանց: IV ընդունելով՝ ա) որ արեւելեան Ռուսաստանի օտարացի ժողովրդներէ ամեն մէկը սկզբնական կրթութեան միջոցը պէտք է նրա մայրենի բարբառը լինի և բ) որ օտարացիներէ ուսումնարաններէ ուսուցչական մարմինը պէտք է պահանջել տեղական բարբառներէ բաւական ծանօթութիւն, յանձնարարել ժողովրդական լուսաւորութեան միջնորդին սպակել նախագիծ այդ մասին և մտցնել պետական խորհուրդը: V. Թոյլատրել ժողովրդական լուսաւորութեան միջնորդին, 1) մտցնել պետական խորհուրդի ընտելութեան ենթադրութիւններ, այն կանոններէ ջնջման մասին, որոնց զօրութեամբ անյայտ ուսուցիչներէ և դաստարակներէ կոչուած արվում է միայն քրիստոնեաներին: 2) հոգ տանել անյապաղ ջնջել այն կանոնները, որոնք ձնշում են մանկապաններին ուսումնարաններում դաստաւանութեան իրաւունք և թոյլատրել ստանալու համար: VI. Յանձնել ներքին գործերի միջնորդին սպակել և մտցնել ներքին գործերի պարտադիր անելու համար երկրորդ անգամ ընտրութիւններ նշանակելը, երբ առաջին ընտրութիւնները գերակա տանտէրերի վերաբերմամբ Թիւրքեստանի թափառական ժողովրդից կատարված, չեն հաստատվում. VII. Առանձին ժողովի խորհրդակցութեան ենթակայ համարել կրօնական համբերողութեան վերաբերեալ հարցերը: 1) Մասնագրական հոգեւորականներին անձնական պատուաւոր քաղաքացու կոչումը տալու մասին, 2) փոփոխելու տիրող կանոնները այն գործերի թոյլատրութեան համար, որոնք բոլորում են մանկապաններին ընտանեկան և ժառանգական յարաբերութիւններէ: 3) Իսլամի դաստաւանութիւնը կատարել մայրենի լեզուով և այն կանոնները վերաբերել, որոնք վերաբերում են մանկապաններէ կրօնական պահանջներէ կատարման վերջիններս զինուորական ծառայութեան մէջ եղած ժամանակ: VIII. Խորհրդակցութեան ընտելութեան յանձնել՝ նոր կանոնադրութեան համար նախագիծ կազմելու, մանկապաններէ ձեռքով հրատարակվելի գրքերի և պարբերական հրատարակութիւններէ ու մամուլի ցինգուրային օրէնքներին հաղորդական մասին: Թաւրուր Կայսրը բարեհաճեց հաստատել վերոյիշեալ վճիռները: Փոխ-ժողովապետ Դուրաւովը նշանակած է պետական պաշտպանութեան խորհրդի մշտական անդամ, թողնելով նրան ծովային տեխնիկական վարչութեան նախագահի պաշտօնում և գեներալ-ադիւտանտի կոչումի մէջ:

Կիւնի, 21 յունիսի: Կիւնի կայարանում հաւաքել էին պահեստի գործի մի մասը: Նրանց մէջ երևացին կողմակի մարդիկ, գլխաւորապէս հրէաներ, որոնք գրգռու էին պահեստի զինուորներին ընդդիմադրութիւն ցոյց տալ կառավարութեան և սկսեցին ցրուել յանցաւոր բովանդակութեամբ թուցիկներ: Պահեստի զինուորները սաստիկ զրգովեցին գրգռիչների արարելով, ընկան նրանց վրա և սկսեցին նշարանք անել: Ուստիկանութեան ջանքերը խռովութեան առաջն առնելու՝ անյաշող անցան: Դրդուիչներին ձեռնու մէջ առանց խնայելու: Կանչվեց մի գործմաս, որ կարգը վերականգնեց: Որոշ երեք գրգռիչներ և հրէական կաթարձակիչ Շապիրան բանտարկված են:

ԹԻՒՐՕՍՏԱՆ, 22 յունիսի, Հասաւ «Պատեմ-կին» զբոսաւորը:

ՊԵՏԵՐՔՈՒՄԻ: Պաշտօնական Այն լուրը, որ երկայն «Դէր Ֆրայդ» լրագրում, որ իբր թէ Ժիտովի քաղաքում, ներկայ մայիսի 12-ին Կիւնի գեներալ նահանգապետի հրամանով հրաւիրվեց քրիստոնեաների և հրէաների ընդհանուր ժողովրդական համագումար, ընկնում

յիշեալ քաղաքում կատարվող անկարգութիւնները, բոլորովին հիմքից գործէ: Վերջին տարիներէ ընթացքում յեղափոխական կուսակցութիւններէ գործունէութիւնը, գլխաւորապէս լինի սօցիալ-դեմոկրատիայի և հրէական յեղափոխականների՝ վարվում էր սխառմամբ: Բարձր անդհատ գործադուլների միջոցով, ձգտելով կործանել լեհական թագաւորութեան նահանգներէ տնտեսական կազմը: Հետեւելով մէկը միւսին, անընդհատ կերպով տեղի էին ունենում ընդհարումներ, մասնիֆեստացիաներ և աշխատաւորների ու գործաւորների մէջ սպանութեան փորձեր պաշտօնական և մասնաւոր մարդկանց կեանքի դէմ և բանւորների ահաբեկում, որոնք չէին ցանկանում հակվել գործադուլ անողների կողմը: Այդ շարժումը, որ զուրկ էր և իցէ բնական հիմքից, տեղական բանւորների կեանքի պայմաններում, ունենալով բացառապէս քաղաքական նշանակութիւն, հետզհետէ և արուեստականապէս անելով անդադրում ագիտացիայի ազդեցութեամբ, հասցրեց մինչև Լօձի դէպքերին, որ 3 օրվայ ընթացքում յունիսի 8-ից 10-ը, նշանաւոր դարձաւ յեղափոխական եռանդի սաստիկ լարմամբ: Ամբոխի ընդհարումը գործի հետ, որ տեղի ունեցաւ յունիսի 5-ի ցոյցի ժամանակ, երբ ցրվող ամբոխը, մօտ 200 հոգի հրէայ և քրիստոնեայ, սկսեց գնդակահարել դրազուններն զորամասը, և երբ վերջինս պատասխանով, հարուած տալով սպանվեցին 5 քրիստոնեայ և վիրաւորվեցին մի քանի հրէաներ, առիթ առեց բանւորներին Լօձում յունիսի 7-ին կազմելու մի ահաւոր թափո՜ր՝ սպանվածներին թաղելու ժամանակ: Ամբոխը, թուով 20—30 հազար մարդ, տանում էր մօտ 14 կարմիր դրօշակներ յեղափոխական մակագրութեամբ և երգում էր յեղափոխական երգեր: Թափօրը մի քանի անգամ կանգ առաւ այն նպատակով, որ միջոց տայ ագիտատօրներին ճառեր արտասանելու: Տեղական իշխանութեան տուած տեղեկութեան համաձայն, թէ և թաղման հանդէսները քրիստոնէական սովորութեամբ էին կազմված, բայց և այնպէս դրօշակները տանում էին բացառապէս հրէաները, որոնք գլխաւորապէս ագիտատօրներ էին և ճառեր արտասանողներ, իսկ դրօշակները վրա եղած յեղափոխական մակագրութիւնները հրէական լեզուով էին գրված: Այդ օրը գործերի հետ ընդհարում տեղի չունեցաւ, որովհետեւ, չարագիծով կատարելու կրօնական ծեսերը, զօրամասերը բաւականացան մի քանի խաչած փողոցներում ամբոխի առաջը կտրել, որպէս զի ստիպեն թափօրը անցնելու ոչ բազմամարդ փողոցներով: Չը բաւականաւարով ըստ երևոյթին, ցոյցի խաղաղ բնաւորութեամբ, լինի սօցիալ-դեմոկրատիական կուսակցութիւնը հրէական «Բուդ» յեղափոխական կուսակցութեան հետ, օգտվելով գործի, առ երևոյթ թուութեամբ, վճռեցին նրան նոր կոչի հրաւիրել և ցրվելով քաղաքում թուցիկներ՝ հրաւիրում էին բոլոր բանւորներին յունիսի 9-ին կազմելու փառաւոր մի ցոյց՝ յեղափոխական երգեր երգելով և կարմիր դրօշակներ պարգելով: Այս առիթով ագիտատօրները առաջուց իշխանութեան մաս սպառնացին, եթէ վերջինս, ամբոխը ցրվելիս, զենք գործածէ: Սակայն յուսալով, որ տեղական կառավարութիւնը անպատրաստ կը գտնեն դէպքերի ժամանակ և այդպիսով միջոց կը տան յեղափոխական շարժմանը ընդարձակ ծաւալ ընդունել, ցոյցը սարգվեց թուցիկում յիշված օրից առաջ՝ երեկոյան: Յունիսի 8-ին քաղաքում լուր տարածվեց երկու հրէաների թաղման մասին, որոնք իբր թէ մեռել էին հրէական Պօդնանեան հիւանդանոցում—վէրքերից, որ ստացել էին յունիսի 5-ին գործի հետ ունեցած ընդհարման ժամանակ: Հետեւեց եղաւ այն, որ դէպի յիշեալ հիւանդանոցը ամեն կողմից զինւորներ բանւորներ: Հիւանդանոցի վարչութիւնը յայտնեց հաւաքվածներին, որ հրէաներից ոչ ոք հիւանդանոցում չէ մեռել, բայց ագիտատօրները հէնց այդ տեղում նոր լուր տարածեցին, իբր թէ ոստիկանութիւնը թագրել է մեռած հրէաների դիակները, գաղտնի թաղելով նրանց հրէական հանգստանում: Գլուխ բանալով և շարքեր կազմելով, հազարաւոր ամբոխը դիմեց դէպի քաղաքի մեծ փողոցը—Հետրօի: Աւելի և աւելի շարժումը դէպի առաջ մեծանում էր, որովհետեւ ցոյցը սարքել էին այնպիսի ժամանակ, երբ բանւորները, վերջացնելով օրվայ աշխատանքները, վերադառնում էին գործարաններին: Ամբոխը երգում էր յեղափոխական երգեր և տանում էր կարմիր և սև դրօշակներ հրէական և լեհական մակագրութիւններով: Երբ ամբոխը անցաւ Պետրօօվսկի փողոցի կէսը,

ցոյց անողների հանդէպ ճանապարհը կտրելով երկայն կապակներ մի գործմաս: Նրանց պահանջը՝ ամբոխին ցրվել, չը կատարվեց վերջինս կողմից: Երբ կապակները առաջ անցան դէպի ամբոխը, ամբոխից նրանց վրա մի քանի անգամ արձակեցին, որից հարկադրված պատասխանելու նոյն տեսակ—կապակները կանգնեցին: Կապակների առաջին շարքերը շտապեցին և կրակ բացին: Ամբոխը ցրվեց, թողնելով տեղում 12 մեռած և 18 վիրաւորված, որի ժամանակ նրանցից մի քանիսը ոտնակոխ եղան հէնց ամբոխից: Յունիսի 9-ի առաւօտը և ցերեկը բոլորովին խաղաղ անցաւ, շնորհիւ կաթսիկների Գրիստոսի Ս. Մարմի տօնին: Տաս հազարաւոր աղօթողները անցան քաղաքի միջից երեքեքական քարաղոյթեամբ, ոչ մի տեղ արգօրէ կողմից, սակայն, յունիսի 8-ին ամբոխը սկսեց անկարգութիւններ սարքել, քաղաքի քանազան մասերում սկսեցին հրացան արձակել փողոցներով անցնող զինւորներին, օֆիցերներին, ոստիկանական մարդկանց և առհասարակ պաշտօնականներին վրա: Ամբոխը կոտորում էր գաղի լապտերները, կտրում էր հեռախօսի թելերը, այրում արքունական գինեխանութները, և մթութիւնից օգուտ քաղելով՝ քաղաքի քանազան մասերում պատնէշներ էր բարձրացնում: Յունիսի 10-ի առաւօտից սկսած, գիշերվալից յանկարծակի ծագած շարժումը ընդեց աւելի և աւելի վտանգաւոր լայն չափեր ընդունել: Լօձի բոլոր գործարաններում և ֆաբրիկաներում բանւորները գործադուլ արին և փողոց դուրս եկան իսկ գլխաւորապէս հրէական քաղաքամասի պատուհաններից, պատշգամբներից և տան կլետուրներէ հրացանաձգութիւն սկսվեց ամեն ուղղութեամբ: Մի քանի տներէց, նոյն իսկ գնդակահարութիւնը կատարվում էր խմբովին, որ վկայում էր կազմակերպված հրացանաձգութեան մասին: Մրան վկայում էր և այն փաստը, որ Կիւնիապարկի ցանկապատից անցնող մի էսկադրօն դրազուններ վրա 100-ից աւելի կրակ բացին: Կօստանդինուպիան փողոցում գործանցի վրա ամբոխը ևս մի քանի հարուած տուեց ատրճանակներէ: Միաժամանակ քաղաքի քանազան մասերում զինված և կազմակերպված ցուցարարները խլում էին գիւղացիներից բռնը, կտրում էին հեռախօսի սիւները, բանդուկ մայթերը և փողոցի քարերը և այդ տեսակ հաւաքած նիւթերից՝ պատնէշներ շինում, չորս կողմը փաթաթելով հեռախօսի թելերով և սիւներով: Նոյն ժամանակին բանդուկը և այրում էին գինու խանութները: Իսկալքի գործը, թուով անկարող կուլուր զինված ցոյցի դէմ, պէտք է բաժանվէր փողը մասերի նրա համար, որպէս զի քաղաքի քանազան մասերում խմբովին յարձակումն գործելով, պատնէշներ էր ցրվին ցուցարարներին: Մէկ պատնէշ՝ ատրճանակներով զինված մուգիկաններին օգնուածութեամբ, անձամբ բանդեց գնդի հրամանատարը: Հրացանաձգութիւնը ամբողջ քաղաքում ինչպէս գործի, այնպէս էլ ամբոխի կողմից շարունակվեց մինչև գիշերվան 3 ժամը, որի ժամանակ, ինքեքի, տեղի ունեցաւ ցաւալի դէպքեր, որովհետեւ գործերը հարկադրված էին այն տան կրակին պատասխանել, որոնց պատուհաններից արձակու էին ցուցարարներ: Նրանցից սպանված են այդ օրը 160 մարդ, իսկ վիրաւորվածներ հաշւած են 152: Զօրքի կորուստը՝ 1 օֆիցեր և 3 ձիաւոր վիրաւորված: Բայց զրանց սպանված են 2 ոստիկան և նրանցից մի բանիւնները վիրաւորված են: Յունիսի 11-ին գործի գալուստով, տեղական պալատը լրացնելու, քաղաքում կարգը վերականգնվեց: Բոլոր ֆաբրիկաներում բանւորները աշխատանքի ձեռնարկեցին: Այդ օրն և իսկ եղաւ Բարձրագոյն հրաման Լօձ քաղաքը և նրա գաւառը պատերազմական դրութեան մէջ հրատարակելու, որը յայտարարվեց յունիսի 12-ին: Լօձի անկարգութիւնների հետ միասին տեղի ունեցան նաև մասնաւոր մարդկանց սպանութիւններ և թաւանում: Կատարած ցուցարարների ձեռքով սպանված է գործարանատէր Բալմար աղվայ հետ և նրա ուսուցիչ կողպատված է: Ընդհանրապէս ցուցարարների ձեռքով կողպատումներ և ստացուածքի ոչնչացման ջնաւը հաշվում են 100,000 ռ: Լօձի բնակիչները, սարսափից խելագարված, փախչում էին քաղաքից, այնպէս որ միայն հրէաների տեղեկութիւնների համաձայն, երեկո օրվայ ընթացքում փախել են մօտ 20,000 հոգի: Կատարված ընդհանուր տեղեկութիւնների համա-

ձայն խաղաղ ազգաբնակչութեան ահաբեկումը լինի սօցիալ դեմոկրատիական կուսակցութեան և հրէական բուհիստներ միահամուռ ջանքերով առաջ բերեց տեղական ազգաբնակչութեան մէջ բնակչիա նրանց դէմ: Նրանց համակրութիւնը երևան եկաւ Զինատօնովի և Սօնօվեցի գործադուլներին մէջ, նոյնպէս և այն ցոյցով, որ սարքեցին մօտ 200 բուհիստներ Պետրօօվսկում, բայց վերջին դէպքում, երբ ոստիկանութիւնը ցրվում էր ցուցարարներին, իրանք հրէայ բնակիչները ոստիկանութեան յանձնեցին 30 ցուցարարներին: Լօձում բանւորների վերադարձը իրանց սովորական աշխատանքներին ֆաբրիկաներում և գործարաններում, հէնց երկրորդ օրը վերոյիշեալ անկարգութիւններից յետոյ—նոյնպէս վկայում է երկրի մէջ նկատված նոր արածագրութեան մասին և այն որ բանւորների մեծամասնութեան կողմից գործադուլների և անկարգութիւնների մէջ մասնակցութիւն ունենալը յաճախ լինում է ստիպված: Վերջին ժամանակներս տեղական լինի բանւոր ազգաբնակչութեան մէջ միշտ աւելի ու աւելի ձայներ են լսվում, թէ լինի և հրէա սօցիալիստների սարքած գործադուլները և ցոյցերը անմիտ բաներ են, որ քաղաքում են հէնց իրանց բանւորներին և կործանում են ամբողջ երկրի և ժողովրդի բարօրութիւնը:

ԲԵՐԼԻՆ, 25 յունիսի: Հրատարակված է նոր ստորագրութիւն հապօնական նոր փոխառութեան մասին՝ 28, 29, և 30-ին յունիսի՝ Լօնդոնում, Բերլինում և Վիէնայում:

Կ. ՊՈԼԻՍ, 26 յունիսի: Թուրքաց երեք նոր դրահանաւեր, Ասիերիայում կառուցված, պէտք է գնային Խօբէյի քաղաքի պաշարումը վերցնելու, բայց «Պատեմկին»-ի դէպքի պատճառով և վախճանով խռովութեան ծագելուց այս նաւերի էկզպատիւնի մէջ զրահանաւի մեկնելը յետաձգված է:

ՊԵՏԵՐՔՈՒՄԻ: Լինելով ամենահպատակ հեռագիրները յունիսի 24-ից 1905 թ. 1) Յունիսի 22-ին առաւօտեան 5 ժամին ձախ թիւ վրա երկայն հապօնացիների արշաւումը Բօյնիէ և Լէպուշիայի դէմ: Մեր մասերը կրակ բանալով, կամաց նահանջեցին, թշնամուռ յետ պահելով: Այսօր, գիշերվա 2 ժամից հակառակորդի արշաւումը Լօպուշանի վրա շարունակվում է, որի ժամանակ հապօնացիները բացին արտիլերիական կրակ մեր առաջաւոր մասերի վրա: Մեր պահակները թշնամուռ պահելով, մի փողը յետ գնացին: Մրանց յետոյ հապօնացիների կրկնվող արշաւումները առաջն առնվեց: Թշնամին հեռացաւ դէպի յետ և զբաւեց առավման տեղը: 2) Յունիսի 24-ին առաւօտեան մեր աջ թիւի դիմացը երկայն հապօնացիների արշաւումը մի քանի բաւալիսով և հեծնլազօրով արտիլերիայի հետ միասին: Մեր առաջաւոր մասերը պահեցին իրանց տեղերը: Սախալինի դիւնորահան նահանգապետ գեներալ-լէյտնանտ Լեպպուշովի ամենահպատակ հեռագիրները յունիսի 24-ին, 1905 թ. 1) Լուր ստացվեց, որ յունիսի 24-ին առաւօտեան 9 ժամին հապօնական հեծնլազօրը մօտեցաւ Չապիւան գիւղին, որ գտնվում է Զիպիսան և Կօրսակօվան դիւրերի մէջ, վերջինից 15 վերստ հեռաւորութեամբ. կրակի տակ, թշնամին սկսեց ափ հանել 15 նաւերից գօրք: Մօտ ժամը 3-ի մօտերը, մօտեցան կօրսակօվան կայանին թշնամու 15 ակնանաւերը: Մեր բաւալիսով կրակ բացեց. ակնանաւերը պատասխանեցին, գնդակահարելով բաւալիսին և ամբողջ կօրսակօվան դիւրը: Մեր աղող կրակից ակնանաւերը ստիպված էին դադարեցնել կրակը և հեռանալ: Ցոյց տալով կարելի ընդդիմադրութիւն, գօրքի կառավարիչը հրամայեց պայթեցնել ափում գտնված թշնամութեանը, այլեւ թագաւորական բոլոր զինութիւնները և լողանալու միջոցները և հեռացաւ գօրքի հետ դէպի հիւսիս: Ուղեւորութեան ժամանակ սպանված են 4 հոգի զէրքի բնակիչներից և մէկ զինւոր և առանց տեղեկութեան կորաւ մէկ նաւատար:

ԲԵՐԼԻՆ, 25 յունիսի: Բոլոր գործարանները փակ են: Բանւորները միաձայն վճռեցին սօսնել Իվանօվիան տօնը: Ցերեկվայ 3 ժամին 15,000 բանւորներ հաւաքվեցին արուարձանում, գնացին գործարանը դրօշակներով՝ ընկնելու իրանց կարիքները, գլխաւորապէս բնակարանի հարցը, և նոյն կարգով վերադարձան: Ընդհարում ոստիկանութեան հետ չեղաւ:

ՆՕՎՈՐՈՍԻՅՍԿ, 24 յունիսի: Հասան այս-

Электротечатня типографскаго Т—ва „Гермесъ“. Мад. ул. № 15.